Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի մարզի «Ողջաբերդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ինչպես բարձրացնել ավագ դասարաններում սովորողների սովորելու մոտիվացիան

Վերապատրաստող, մենթոր՝ Մկրտչյան Մելիք

Ուսուցիչ՝ Հովհաննիսյան Արմիկ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

1. Մոտիվացիա----------4

2. Ուսուցման գործունեություն ----------8

3. Ուսումնական մոտիվացիա ----------9

4. Ռազմավարություն ----------11

Եզրակացություն---------- 17

Օգտագործված գրականության ցանկ----------18

«Եթե մանկավարժությունն ուզում է դաստիարակել մարդուն բոլոր տեսանկյուններից, ապա նա պետք է նախ ճանաչի նրան բոլոր տեսանկյուններից»:

Կ. Դ. Ուշինսկի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Այսօր կրթության ոլորտում աշխատողներից ոչ մեկիս համար գաղտնիք չէ, որ ժամանակակից աշխարհում կրթական համակարգը խորը ճգնաժամ է ապրում: Գիտատեխնիկական թռիչքային առաջընթացի այս պայմաններում, երբ ամեն օր նորանոր փոփոխություններ են տեղի ունենում, և այդ փոփոխությունները վայրկյանների ընթացքում հասանելի են դառնում հասարակության լայն զանգվածներին, այլընտրանքային կրթության ոլորտն ընդլայնվում է: Ըստ այդմ՝ հանրակրթության առջև ծառանում են բազմաթիվ մարտահրավերներ. այսօրվա սովորողը նույնը չէ, ինչ թեկուզ 10 տարի առաջվա սովորողը, քանզի այսօրվա դպրոցականը նշածս վայրկենական փոփոխությունների անմիջական կրողն է: Նման պայմաններում, բնականաբար, կրթություն իրականացնողներս բավականին բարդ իրավիճակում ենք հայտնվում: Հարց է առաջանում. ինչպե՞ս վարվել, որ սովորողը չկորցնի այն սերտ, բայց աներևույթ կապը, որ գոյություն ունի իրեն առաջարկվող դասի և իր պահանջմունքների բավարարման կամ պատկերացրած ապագայի միջև: Ուսուցչի առջև խնդիր է դրվում բացահայտել աշակերտի կրթական կարիքները, զարգացնել նրա ինքնուրույնությունը, ձևավորել նախաձեռնողականությունը, խթանել ստեղծագործական ունակությունները, ուղղորդել արժեքային համակարգը: Իսկ այս ամենն արդյունավետ իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է բարձրացնել սովորողի սովորելու մոտիվացիան:

Թեման հետազոտելու մեր **նպատակն է**՝ գտնել ուղիներ աշակերտների ուսումնառության մոտիվացիան բարելավելու համար:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրված **խնդիրներն են՝**

ա/ ուսումնասիրել մոտիվացիան և նրա տեսակները

բ/ բացահայտել սովորողների մեջ դրա անկման պատճառները

գ/ մշակել ռազմավարություն

ՄՈՏԻՎԱՑԻԱ[1]

Մոտիվացիան ցանկացած անհատի գործունեության կարևոր բաղադրիչն է: Առաջացել է լատիներեն movere բառից, որը թարգմանվում է «ես շարժվում եմ»: Այսինքն՝ մոտիվացիա նշանակում է դրդապատճառ, շարժառիթ(գործողություն): Այս եզրույթն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքներ» հոդվածում:

Հոգեբանները նշում են, որ դա ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը: Այլ կերպ ասած, մոտիվացիան կարիքների և ցանկությունների ազդեցությամբ թելադրվող վարքագիծն է:

Մոտիվացիան կարող է սահմանվել որպես նյարդաբանական գործընթացների ամբողջություն, որոնք ակտիվանում են որոշակի խթանիչով, և գագաթնակետը մի շարք հորմոնների և նյարդային հաղորդիչների արտադրությունն է, որոնք մարդուն ստիպում են ակտիվացնել ինքն իրեն: Այս էներգիան մարդուն մղում, շարժում և առաջնորդում է այնպես, որ նրա գործողությունները կենտրոնանան որոշակի նպատակի վրա, որը միշտ կապված է որոշ կարիքների բավարարման հետ:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ մոտիվացիան գործընթաց է, որը սկիզբ է դնում, ուղղորդում և պահպանում դեպի նպատակը տանող վարքագիծը: Մոտիվացիան խթան է, որը ստիպում է մեզ գործել:

———————————

1. Շարժառիթ, ներքին և արտաքին գործոններ, որոնք դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին:

Մոտիվացիայի տեսակները

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ գոյություն ունեն մոտիվացիայի բազմաթիվ տեսակներ ու ձևեր, որոնցից առանձնացրել ենք մի քանիսը, որոնք, կարծում ենք, որոշակի առնչություն ունեն կրթության բնագավառի հետ:



1. Ըստ մոտիվացնող գործոնի՝ արտաքին կամ ներքին

Կախված մոտիվացնող գործոնի՝ մարդու ներսից կամ դրսից լինելուց՝ մոտիվացիան կարող է լինել արտաքին կամ ներքին:

Արտաքին մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն մղում է հասնել ինչ-որ բանի, երբ մոտիվացնող գործոնը նրա ներսում չէ: Այս դեպքում կարևորը ոչ թե անցնելիք ճանապարհի ավարտն է, այլ՝ դրա վարձատրությունը/դրամ, հեղինակություն, ճանաչում.../: Այսինքն՝ դրդող գործոնը ինչ-որ բան ստանալն է և ոչ թե հոգևոր զարգացումը:

Ներքին մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն մղում է հասնել ինչ-որ բանի, երբ մոտիվացնող գործոնը նրա ներսում է: Այս դեպքում կարևոր է անցնելիք ճանապարհի ավարտը: Այստեղ մոտիվացնող գործոնը մարդու լիարժեք և հարմարավետ զգալն է:

2. Ըստ գործունեության արդյունքի՝ դրական կամ բացասական

Կախված մոտիվացնող գործոնի՝ մարդուն ինչ-որ բանի մոտեցնելուց կամ հեռացնելուց՝ մոտիվացիան կարող է լինել դրական կամ բացասական:

Դրական մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն տանում է դրական պարգևի հասնելու ուղու՝ անկախ դրդող գործոնի արտաքին կամ ներքին լինելուց:

Բացասական մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն դրդում է իրականացնել գործողություն՝ պարզապես բացասական հետևանքներից խուսափելու համար:

3. Ըստ ակնկալիքի՝ նյութական կամ ոչ նյութական

Կախված մոտիվացնող գործոնի՝ մարդու ակնկալիքի՝ մոտիվացիան կարող է լինել նյութական և ոչ նյութական:

Նյութական մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն դրդում է իրականացնել գործողություն՝ ինչ-որ բանով խրախուսվելու նպատակով/օրինակ՝ բարձր գնահատական…/

Ոչ նյութական մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն դրդում է իրականացնել գործողություն՝ ուրիշների հետ շփվելու, հոգեկան բավարարվածություն ստանալու և նմանատիպ այլ նպատակներով:

4. Ըստ մոտիվացվողների քանակի՝ անհատական և խմբային

Խմբային մոտիվացիան այն էներգիան է, որ մարդը ստանում է թիմային աշխատանքից և ներդնում է խմբային ու հասարակական նպատակներ իրականացնելու համար:

5. Ըստ մարդու իրական նպատակների՝ ինքնամոտիվացիա

Ինքնամոտիվացիան այն մոտիվացիան է, որ մարդն ինքն է որոշում նպատակ և դրան հասնելու ձևերը, ինքն է իրեն դրդում որևէ գործողության՝ ըստ կարիքի:

6. Ըստ կարիքի ծագման՝ առաջնային և երկրորդական կամ սոցիալական

Այստեղ հարկ կհամարենք անդրադառնալ քսաներորդ դարի ամերիկացի հոգեբան և հումանիստական հոգեբանության հիմնադիրներից Աբրահամ Մասլոուի ուսումնասիրությանը, որում նա մարդկանց կարիքները ստորակարգել է բուրգի տեսքով: Ստորևից վերև մարդն ունի հետևյալ կարիքները՝ ֆիզիոլոգիական (ուտել, խմել, շնչել, քնել, վերարտադրվել...), ապահովության կամ անվտանգության (աշխատանք, ընտանիք, տուն, փող...), պատկանելության(ընտանիք ունենալ, ընկերներ և զույգ), ճանաչման կամ պատվի(հարգանք, հաջողություն, վստահություն...) և ինքնաիրացման(կատարելագործում, ստեղծագործակա-նություն, ինքնապատկերում...):



Առաջնային մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն մղում է բավարարելու բուրգի հիմքի, այսինքն՝ ֆիզիոլոգիական կարիքները: Դա պարզապես բնազդային ռեակցիա է, որը մարդուն մղում է ուտելու, խմելու, քնելու, վերարտադրվելու:

Երկրորդային կամ *սոցիալական* մոտիվացիան այն էներգիան է, որը մարդուն մղում է բավարարելու բուրգի ավելի բարձր կարիքները, որոնք ֆիզիկական և հուզական բարեկեցության համար են:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ուսուցում՝ կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, Հոդված 3, 1.1

Ընդունված է Ազգային ժողովի կողմից, 14 ապրիլի 1999թ.

Ուսուցման գործունեությունը պարտադիր կերպով ներառում է հետևյալ բաղադրիչները `ուսումնական առաջադրանք, ուսումնական գործողություններ, ինքնատիրապետման և ինքնագնահատականի գործողություններ:

Ակտիվ գործունեության ընթացքում սովորողը ցուցաբերում է մտավոր զարգացման նոր առանձնահատկություններ, որոնք հոգեբաններն անվանում են *մտավոր նորագոյացություններ*:

Ավագ դպրոցականը 2-3 տարվա ընթացքում, տիրապետելով նախաբուհական կրթության որոշակի ծրագրին, սահմանում է անձնական չափանիշներ և գնահատում հաջողության սուբյեկտիվ հավանականությունը:

Նախաբուհական վերապատրաստման համակարգը նպաստում է ապագա ուսանողների օպտիմալ ինքնագնահատականի ձևավորմանը, ինքնակրթության հմտությունների կատարելագործմանը և ապահովում նրանց ներառումը ապագա մասնագիտական գործունեությանը հարմարվելու գործընթացում:

Ավագ դպրոցի աշակերտի մոտիվացիայի մեջ կարեւոր դեր է խաղում ուսուցչի վարքի ոճը: Ավագ աշակերտի համար առանձին առարկայի ուսուցչի հեղինակությունը երբեմն էապես տարբերվում է դպրոցի հեղինակությունից

Սակայն չափահասի, հատկապես ծնողի վարքագիծը միշտ չէ, որ ճիշտ է իր երեխայի նկատմամբ: Տեղին կլինի մեջբերել Ա.Նիլի հայտարարությունը. *«Երեխան, ում կյանքը մշտապես չի վերահսկվում մեծահասակների կողմից, վաղ թե ուշ հասնում է կյանքի հաջողությունների»:*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱ

Ուսումնական մոտիվացիան ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանը: Մոտիվները ձևավորում են սովորողի բնավորության առանձնահատկություններով, ինչպես նաև մի շարք այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են ծնողների վերաբերմունքը, ուսումնական միջավայրը՝ դպրոցը, ուսուցիչները, ուսումնական նյութերը, դասընկերները:

Սովորողների ուսումնական մոտիվացիան կարող է տարբեր լինել՝ կախված նաև նրանց տարիքից և նույնիսկ տրամադրությունից: Դրա համար էլ գոյություն ունի մոտիվացիայի երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր:

Մոտիվացիայի մակարդակները		
բարձր՝երբ սովորողը ցանկություն ունի դպրոց գնալ,սովորել նոր բան,սիրում է շփվել դասընկերների,ուսուցչի հետ,սիրում է իր կարգավիճակը	միջին՝ երբ սովորողին գրավում է ոչ թե ուսումնական գործընթացը,այլ ուսուցչի և դասընկերների հետ շփվելու ցանկությունը	ցածր՝ երբ սովորողը դպրոց գնալու ցանկություն չունի և նրան չի հետաքրքրում ուսումնական գործընթացը

Ժամանակակից ավագ դպրոցականի ուսուցման մոտիվացիայի մակարդակը պարզելու համար անցկացրեցինք սոցիալական հարցում:

Ավագ դպրոցի աշակերտների կրթական մոտիվացիայի ուսումնասիրությունն իրականացվել է Կոտայքի մարզի Ողջաբերդի միջնակարգ դպրոցի հիման վրա: Հետազոտության առարկան 9-11-րդ դասարանների աշակերտներն են /այս ուստարում 12-րդ դասարան չկա/:

Սոցիալական հարցեր

1. Ինչո՞ւ եմ հաճախում դպրոց:

2. Ի՞նչ եմ անում նպատակիս հասնելու համար /ամեն օր/:

3. Արդյոք բոլո՞ր ուժերս եմ ներդնում դրա համար:

4. Ո՞վ կամ ի՞նչն է խանգարում ինձ:

5. Ի՞նչն է պակասում:

6. Ո՞վ կարող է օգնել ինձ:

Հարցման արդյունքում պարզեցինք, որ ավագ դպրոցականը գիտակցում է, թե ինչի համար է հաճախում դպրոց: Դասարանի աճի հետ՝ պատասխաններում հստակություն և նպատակին մոտենալու համար գործադրվող ջանքեր են նկատվում, որոշ աշակերտների նպատակները քայլ առ քայլ վերածվում են գործողությունների: Ուսմանը խանգարող հանգամանքներից ամենաշատ նշված պատասխանը համացանցն է, որին հաջորդում է աշխատասիրության պակասը: Մեծամասնությունը պատկերացնում է նաև, որ ուսումնառության համար հենց ինքն է իրեն օգնողը: Սակայն այստեղ է, որ շատերի համար առաջ է գալիս լրջագույն խնդիր. ոմանք չեն էլ պատկերացնում՝ ինչ և ինչպես անել:

Այսինքն՝ ավագ դասարանների աշակերտներին պակասում է ներքին մոտիվացիան, քանի որ պատասխանների գերակշիռ մասը վերաբերում էր հենց ներքին մոտիվացիային, ակնհայտորեն քիչ էին արտաքին մոտիվացիային ուղղված պատասխանները: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է օգնել աշակերտին՝ նպաստել ներքին մոտիվացիայի բարձրացմանը և կողմնորոշման ուղիներ գտնելու:

Ավագ դպրոցի աշակերտին բնորոշ է սոցիալական մերձեցման ցանկությունը, կյանքի իմաստի որոնումը, կյանքի պլանների կառուցումը, որոնք որոշվում են անհատի օբյեկտիվ պայմաններով և արժեքային կողմնորոշումներով: Բարձրագույն կրթության և հետաքրքիր աշխատանքի կարևոր ցանկություն կա: Կյանքի լավ պայմանների և նյութական անվտանգության նկատմամբ վերաբերմունքը ամրապնդվում է: Նրանք ձևավորում են իրենց բարոյական աշխարհայացքը ՝ բարոյական «ես» -ը, որը ենթադրում է համոզմունքների կայուն համակարգի առկայություն ՝ անկախ արտաքին պայմաններից և ուրիշների ճնշումներից:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման նպատակները պետք է հիմնված լինեն սովորողի կարիքների, հետաքրքրությունների և ձգտումների վրա: Ուսուցման արդյունքները պետք է բավարարեն երեխայի կարիքները և իմաստալից լինեն նրա համար: Երբ երեխան մեծանում է, այնպիսի կարևոր կարիք է ձևավորվում, ինչպիսին է ապագան կառուցելու կարիքը: Այս կարողության խստությունը և գիտակցումը սոցիալական անձնական հասունության ցուցանիշներից մեկն է: Անհրաժեշտ է վերահսկել այս կարիքի առաջացումը, և երբ անձը հասունանում է, պետք է որոշվի ավելի հեռավոր կյանքի հեռանկար: Միևնույն ժամանակ, նա պետք է գաղափար ունենա, որ ուսումնասիրությունը և դրա արդյունքները կարևոր քայլ են կյանքի ճանապարհին: Այսպիսով, ավելի բարձր մակարդակի վրա ձևավորվում է ներքին մոտիվացիան: Սովորելը, որպես հեռավոր նպատակներին հասնելու միջոց, արտաքին վերահսկողության կարիք չունի: Կյանքի նպատակներին հասնելու ուղին պետք է բաժանվի ավելի փոքր ենթախնդիրների `տեսանելի որոշակի արդյունքներով:
Դասը պետք է կազմակերպվի այնպես, որ ուսանողը շահագրգռված լինի ուսուցման գործընթացով և ուրախությամբ շփվի ուսուցչի, դասընկերների հետ: Դասարանում պետք է լինի համագործակցության, վստահության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Հետաքրքրությունն ու ուրախությունը պետք է լինեն երեխայի հիմնական փորձը դպրոցում և դասարանում:

Շարժառիթների՝ հոգեբանորեն իրավասու կազմակերպության համար կարևոր է ուսումնասիրել ուսուցչի կողմնորոշումը ուսուցման մեջ՝ ուսանողի հաջողությունների անհատական չափանիշներին համապատասխան: Ուսուցիչը խրախուսում և ամրապնդում է աշակերտի ձեռքբերումները ՝ դրանք համեմատելով ոչ թե այլ աշակերտների արդյունքների հետ, այլ իր սեփական՝ կառուցված իր անցած հաջողությունների և անհաջողությունների, անհատական չափանիշների հետ: Ուսուցման նման ռազմավարության արդյունքը հաջողության գրավչության, ինքնավստահության և, որպես արդյունք, օպտիմալ մոտիվացիայի և հաջող ուսումնասիրության աճն է:

Ժամանակակից սովորողի կրթական մոտիվացիայի զարգացման կարևոր պայմանը ուսուցչի անհատականությունն է և սովորողի հետ նրա հարաբերությունների

բնույթը: Ուսուցիչն ինքը պետք է լինի ներքին շարժառիթներով ձեռքբերումների գործունեության օրինակ: Այսինքն, նա պետք է լինի անձ ՝ մանկավարժական գործունեության նկատմամբ սիրո՝ արտահայտված գերակայությամբ և դրա իրականացման նկատմամբ հետաքրքրությամբ, բարձր պրոֆեսիոնալիզմով և ինքնավստահությամբ, բարձր ինքնագնահատականով:

Մոտիվացիայի պակասի պատճառների մանրամասն և ճիշտ գնահատումը նախքան գործողությունների ձեռնարկումը առանցքային դեր ունի, քանի որ սխալ ռազմավարությունը (օրինակ՝ համոզել սովորողին շատ աշխատել այն դեպքում, երբ նա վստահ է, որ պարզապես ի վիճակի չէ կատարել աշխատանքը) կարող է ունենալ հակառակ ազդեցություն և բերել էլ ավելի ապամոտիվացված վիճակի:

Ցածր մոտիվացիայի պատճառները պայմանականորեն բաժանվում են 4 հիմնական խմբի՝ արժեքների անհամապատասխանություն, սեփական արդյունավետության պակաս, խանգարող հույզեր, վերագրման սխալներ:

Անդրանդառնանք դրանցից յուրաքանչյուրին ավելի մանրամասն:

1. Արժեքների անհամապատասխանություն: Երբ առաջադրանքը չի առնչվում կամ նպաստում նրան, ինչ սովորողն արժևորում է, վերջինս մոտիվացված չի լինի դա անել:

Նախ պետք է հասկանալ, թե ինչ է կարևորում սովորողը, և կապել առաջադրանքը դրա հետ: Հաճախ ուսուցիչները կարծում են, որ այն, ինչ մոտիվացնում է իրենց, պետք է մոտիվացնի նաև սովորողներին, մինչդեռ իրականում այդպես չէ, և սովորողներին ներգրավելու համար պետք է բացահայտել հենց վերջիններիս արժեքները:

Դրա համար նրանք աշակերտների մոտ կարող են ակտիվացնել հետևյալ արժեքները՝

- Հետաքրքրվածության արժեք - փորձել կապեր գտնել առաջադրանքի և այն ամենի միջև, ինչ ներքուստ հետաքրքիր է սովորողին:

- Ինքնության արժեք կամ, այլ կերպ ասած, առաջադրանքի կարևորությունը անձի ինքնակայացման համար - ցույց տալ, որ առաջադրանքի կատարումը հենվում է սովորողի այն որակների վրա, որոնք նա համարում է իր ինքնության կարևոր մասը, օրինակ՝ ներգրավել թիմային աշխատանքի մեջ, տալ վերլուծական աշխատանք և այլն:

- Կարևորության արժեք - ցույց տալ սովորողներին, թե որքան կարևոր է առաջադրանքի կատարումը թիմի նպատակներին հասնելու համար:

- Օգտակարության արժեք - ցույց տալ սովորողներին, թե առաջադրանքի կատարման արդյունքում ինչ մեծ օգուտ և արժեք է ստեղծվում իր համար, թե առաջադրանքի կատարումն ինչպես է նպաստելու նրա հետագա նպատակներին հասնելուն, և ինչ հետագա խնդիրներ կարող է կանխարգելել այս պահին խնդրի լուծումը:

Երբ սովորողը չի կարևորում առաջադրանքը, և ակնհայտ չէ, թե որ արժեքի անհամապատասխանությունն է հանգեցրել այս իրավիճակին, ապա ուսուցիչը կարող է միաժամանակ փորձել ակտիվացնել մի քանի արժեք:

2. Սեփական արդյունավետության պակաս: Երբ սովորողը կարծում է, որ առաջադրանքը կատարելու համար համապատասխան հմտություններ չունի, նա մոտիվացված չի լինի առհասարակ որևէ քայլ ձեռնարկելու:

Հարկավոր է աշխատել սովորողի ինքնավստահության վրա: Դա կարելի է անել մի քանի եղանակով: Տարբերակներից մեկն է մատնանշել նախկինում տեղի ունեցած այն իրավիճակները, երբ ինքն ունեցել է նման սովորող, և թե ինչպես է նա իրեն պահել նման իրավիճակում՝ որպես օրինակ: Ինքնավստահության հետ աշխատելու մեկ այլ տարբերակ է տվյալ բարդ խնդիրն ավելի փոքր առաջադրանքների բաժանելը, որը խնդիրը սովորողի համար կդարձնի առավել հաղթահարելի:

Սովորողները հաճախ մտածում են, որ առաջադրանքի կատարումն իրենցից պահանջում է ավելի շատ ժամանակի և ջանքերի ներդրում, քան իրենք ունակ են: Ուսուցչի խնդիրն է բացատրել, որ նրանք ունեն անհրաժեշտ հմտություններ,

հնարավոր է՝ պարզապես գերագնահատում են պահանջվող հմտությունները: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը կարող է առաջարկել հավելյալ օգնություն՝ առաջադրանքը կատարելու համար:

Երբեմն աշակերտների մոտ հակառակ պատկերն է լինում, երբ գերագնահատում են իրենց ուժերը: Սխալվելու դեպքում նրանք պատասխանատվությունն իրենց վրա չեն վերցնում, այլ պատճառը տեսնում են առաջադրանքի առանձնահատկությունների մեջ: Նման իրավիճակում աշակերտին պետք է ցույց տալ, որ առաջադրանքը պահանջում է այլ մոտեցում:

3. Խանգարող հույզեր: Երբ սովորողներն ունեն բացասական հույզեր, նրանք մոտիվացված չեն լինում կատարել առաջադրանքը:

Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ սովորողն իրեն լսված ու հասկացված կզգա: Փորձել հարցնել բացասական հույզերի պատճառների մասին՝ առանց գնահատականներ տալու: Այնուհետև՝ կարճ ամփոփել սովորողի ասածը և հարցնել՝ արդյոք ճի՞շտ է հասկացել: Երբ մարդիկ իրենց զգում են լսված և հասկացված, նրանց բացասական հույզերը կարող են թուլանալ: Լավագույն արդյունքի հասնելու համար ցանկալի է կանոնավոր կերպով նման զրույցներ ունենալ:

4. Վերագրման սխալներ: Երբ սովորողները չեն կարողանում ճիշտ հասկանալ իրենց դժվարությունների պատճառը, կամ երբ դժվարությունները վերագրում են արտաքին պատճառների, որոնք չեն ենթարկվում իրենց վերահսկողությանը, նրանք արդյունքում ունենում են մոտիվացիայի պակաս:

Օգնել սովորողին բացահայտել իրավիճակի իրական պատճառները և մշակել ծրագիր՝ ուղղված այդ պատճառների վերացմանը:

Մոտիվացիայի պակասի դեպքում իրական խնդրի բացահայտումը, այնուհետև՝ համապատասխան մարտավարության կիրառումը կարող է բերել իրավիճակի շտկմանն ու սովորողների մոտ մոտիվացիայի զգալի աճի:

Ներքին մոտիվացիայի բարձրացման ռազմավարություն

Ինչպես արդեն նշել ենք, ներքին մոտիվացիայի դեպքում անհատի խրախուսման ազդակները բխում են ներսից և կապված են սեփական հետաքրքրությունների ու ցանկությունների հետ: Սակայն ուսուցչի կարևոր գործառույթներից մեկն էլ աշակերտի ներքին մոտիվացիայի բարձրացումն է:

Առանձնացվել են ներքին մոտիվացիան խթանող մի քանի գործոն՝

մարտահրավեր, հետաքրքրություն, հսկողություն, համագործակցություն և մրցակցություն, ճանաչում և ընդունում:

1. Մարդիկ մոտիվացվում են, երբ փորձում են հասնել մի նպատակի, որը բխում է իրենց անձնական հետաքրքրություններից, կապված է ինքնագնահատականի բարձրացման հետ, որտեղ գործողության արդյունքը հասանելի է և նպատակին հասնելը հնարավոր է, բայց ոչ շատ հեշտ:

2. Մարդու ներքին մոտիվացիան բարձրանում է, երբ ֆիզիկական միջավայրում ինչ-որ բան գրավում է նրա ուշադրությունը, այն է՝ զգայական հետաքրքրությունը և երբ գործողությունը կատարելիս անհատի մոտ ցանկություն է առաջանում սովորել ավելին, այն է՝ ճանաչողական հետաքրքրություն:

3. Մարդիկ սիրում են, որ իրենց միջավայրը վերահսկվում է, և հստակ սահմանված են նպատակները՝ ուր են գնում և ինչու:

4. Ներքին մոտիվացիան կարող է բարձրանալ այնպիսի իրավիճակներում, երբ անհատը բավականություն է ստանում մեկ ուրիշին օգնելուց, ինչպես նաև այն դեպքերում , երբ կարողանում է համեմատել իր և մյուսների կատարած աշխատանքը, որտեղ ինքն ավելի շահեկան դիրքերում է:

Մարդիկ սիրում են, երբ իրենց կատարած աշխատանքը և գրանցած հաջողությունները ճանաչվում և ընդունվում են մյուսների կողմից:

Առանձնակի ուշադրության է արժանի SCARF անունը ստացած մոդելը, որը մարդկանց մոտիվացիան բարձրացնելու կիրառելի ու արդյունավետ գործիք է: Այս մոդելի հիմքում նյարդաբանական հետազոտությունն է, համաձայն որի՝ սոցիալական վարքագիծը կառավարվում է վախերը (սպառնալիքները) նվազեցնելով և խրախուսումը բարձրացնելով: Այլ կերպ ասած՝ ինչպես նշում է մոդելի հեղինակը՝ Դևիդ Ռոքը, սոցիալական կարիքների վախերի դրսևորումները ուղեղում արտահայտվում են նույն կերպ, ինչպես սննդի կամ ջրի կարիքը:

Ուսուցիչը պետք է զարգացնի աշակերտի վրա ազդելու կարողությունը՝ նվազեցնելով վտանգը, բարձրացնելով խրախուսումը: Այս մեխանիզմի կիրառումը նպաստում է ներգրավվածության մեծացմանը, իսկ այդ դեպքում ստանում ենք ավելի բարձր արդյունքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման դաս-դասարանային համակարգի հիմքը դրվել է դեռևս 17-րդ դարի մեծագույն մանկավարժ Յան Ամոս Կոմենսկու կողմից: Իհարկե, այն գործում է առ այսօր, սակայն 21-րդ դարի աշակերտին չի կարող բավարարել:

Ժամանակակից ուսուցիչը սովորողին մոտիվացնելու համար պարտավոր է քայլել ժամանակին համընթաց. չէ՞ որ այսօրվա աշակերտը սիրում է արագություն, ունի հնարավորություն իր մտքում ծագած հարցի պատասխանը ստանալ վայրկյանների ընթացքում, երկար աշխատել և երկար մտածել չի սիրում:

1. Դասը դարձնել առավել հետաքրքիր, կապեր գտնել առօրյա իրականության հետ:
2. Դասը սկսել զարմանալի նորությամբ, հետաքրքիր փաստերով, մեջբերումով, թևավոր խոսքով:
3. Տրամաբանական գրոհի ենթարկել սովորողներին առաջին 5 րոպեների ընթացքում:
4. Ձևակերպել հստակ և իրատեսական նպատակներ:
5. Գործածել աղյուսակներ, գծապատկերներ, աստիճանակարգեր...
6. Հաճախ դասագործընթացն անցկացնել դասարանից դուրս՝ օրվա դասին համապատասխան և նպատակային այլընտրանք գտնել:
7. Հնարավորինս զերծ պահել համացանցային շփումից, իսկ անհրաժեշտության դեպքում թույլատրել՝ ի նպաստ ուսումնական գործունեության:
8. Բարձրաձայնել և խրախուսել աշակերտի ամենափոքր հաջողությունն անգամ:

Այսպիսով՝ ուսումնական գործունեության արդյունավետությունն ու հաջողությունն անհնար է առանց մոտիվացիայի, որովհետև ինչքան էլ աշակերտը ունենա բարձր ինտելեկտ, բայց չունենա մոտիվացիա, նրա ուսումնառությունը հաջող ընթացք չի ունենա:Աշակերտի ոչ մի ընդունակություն չի կարող փոխարինել ուսումնական մոտիվացիայի բացակայությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագ աշակերտը՝ որպես կրթական գործունեության առարկա: Ավագ դպրոցականների սովորելու մոտիվացիան և դրա ձևավորման գործընթացը Ավագ դպրոցի աշակերտների կրթական գործունեության հիմնական շարժառիթները, https://tahobaza.ru/hy/starsheklassnik-kak-subekt-uchebnoi-deyatelnosti-uchebnaya-motivaciya/ /07.05.2023/

2. «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, 2014, http://zangak.am/pdf/Mank-mitq-2014(1-2).pdf /01.05.2023/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, Հոդված 3, 1.1

4. Մարինե Եղոյան, Մոտիվացիա, Երևան, 27.06.2020 https://www.iammedia.am/hy/post/Motivation, /01.05.2023/

5. «Ներառող դասավանդում», մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2023, ՀՄԿ, https://hmk.am/nerarogh-dasavandum-metodakan-dzernark-mankavarzhneri-hamar/, /01.05.2023/

6. Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf, /01.05.2023/